«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 92Ս4 27 05 2023թ.

## ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ZOOM ՀԱՐԹԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով մասնաճյուղում Zoom հարթակով իրականացվող գործընթացների պատշաճ կազմակերպման և վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 28-րդ կետի 11-րդենթակետով՝

**հրամայում եմ.**

1. ֆակուլտետների դեկաններին՝

1) Zoom հարթակում դասապրոցես կամ քննություն/ստուգում իրականացնել բացառիկ դեպքերում՝ տնօրենի կամ փոխտնօրենի գրավոր թույլատրվությամբ,

2) Zoom հարթակում քննությունները և ստուգումները իրականացնել հանձնաժողովներով՝ դասավանդող դասախոսի պարտադիր մասնակցությամբ,

3) լսարաններում Zoom հարթակում իրականացվող դասերի վերահսկողություն սահմանելու համար պարտադիր ապահովել համապատասխան ամբիոնի կամ դեկանատի աշխատակցի ներկայությունը,

2. սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել փոխտնօրենի և ՈՒՄՎ պետի վրա,

3. ՈՒՄՎ պետին՝ սույն հրամանի չկատարման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ գրավոր տեղեկացնել փոխտնօրենին,

4. փոխտնօրենին՝ սույն հրամանի չկատարումը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և «ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով» սահմանված կարգով ներկայացնել կարգապահական տույժի կիրառման առաջարկ տնօրենին,

5. սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել փոխտնօրենին, ՈՒՄՎ պետին, ֆակուլտետների դեկանների պաշտոնակատարներին, ամբիոններին:

6. սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ